ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՐ ԳՐՈՒՊ 1» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Լուսառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/ :

Վեղի համայնք Լուսառատ բնակավայր: 20.08.2025 թ.

2025 թվականի օգոստոսի 20-ին ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Լուսառատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Լուսառատ, Գ. Չաուշի 43/ տեղի ունեցավ «ՄԱՐ ԳՐՈՒՊ 1» ՍՊ ընկերության /այսուհետ նաև՝ Ընկերություն/ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Լուսառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Լուսառատ բնակավայրի վարչական ղեկավար՝ Սիրանուշ Ֆարֆարյանը և գյուղի բնակիչներ, Ընկերության տնօրեն՝ Պետրոս Կարագոզյանը և Ընկերության փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը:

Հանրային քննարկումը /1-ին լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Լուսառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ թվով 1-ին հանրային քննարկումը /1-ին լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեղի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեղու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը :

Վեղու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, նշեց, որ քննարկվող հարցի շուրջ 1-ին

հանրային քննարկումն է /1-ին լսում/: Վերջինս առաջարկեց ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցով, որից հետո կիրականացվեն քննարկումները:

Ելույթ ունեցավ Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, վերջինս ներկայացրեց օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերող հարցեր:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1.Որքան տարածք է հայցվում Ձեր կողմից.

2.Հայցվող տարածքը սեփական է արդյոք թե վարձակալություն:

Հարցերին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը հայտնելով, որ ընկերության կողմից հայցվում է 7.1 հա. ենթավարձակալված հողատարածք:

Հաջորդիվ Լուսառատ բնակավայրի բնակիչ՝ Մասիս Տերտերյանը տեսակետ հայտնեց բնակիչների անունից, եթե Ընկերությունը ներդրումներ կանի բնակավայրում, ապա իրենք հաջորդ փուլերում ևս համաձայն կլինեն գործունեությանը:

Հաջորդիվ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Ս. Կարապետյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1.Հետագայում՝ թույլատվությունները ստանալուց հետո, երբ արդյունահանելու եք հումքը, առաջացած խորշերը ինչպես են վերականգնվելու:

Հարցերին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը հայտնելով, որ եթե բացահանքը տարիների ընթացքում չվերականգնվեց, ապա կիրականացվի ռեկուլտիվացիա:

Նախագահողը հարց ուղղեց արդյոք ազդակիր Վեդի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Վարող՝ Գյուղ. և Բնապահ. Բաժնի պետ՝ / / Շ. Բաքոյան

Նախաձեռնող՝ «ՄԱՐ ԳՐՈՒՊ 1»
ՍՊԸ-ի տնօրեն՝ / / Պ. Կարագոզյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«ՄԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ. Արարատի մարզի Վեղի համայնքի Լուսառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

Վեղի համայնք. Լուսառատ բնակավայր **20.08.2025թ.**

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible]	
7.	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	[illegible]	
9.	[illegible]	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	
11.	[illegible]	[illegible]	
12.	[illegible]	[illegible]	
13.	[illegible]	[illegible]	
14.	[illegible]	[illegible]	
15.			
16.			
17.			
18.			
19.			
20.			
21.			